



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՎ ԿԵՂԵՅԻ

ԱՌՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱԼԵՆ ԵՏԲ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ 16 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2025

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2
Անդրադարձներ եւ Խորհրդածութիւններ	Էջ 3
Ողորմութեան Կանչ Մը (Շար. 33)	Էջ 4

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐԲԷՆ (63.7-19)

Տիրոջ ողորմածութիւնը պիտի յիշեցնեմ, Տիրոջ մեծագործութիւնները պիտի փառաբանեմ. այն բոլորին համար որ Տէրը ըրաւ մեզի համար: Իսրայէլի տան դատաւորն ու բարերարը ի՛նքն է, որ իր ողորմութեամբ եւ արդարամտութեամբ այս բաները ըրաւ մեզի:

Տէրը ըսաւ. «Ասոնք իմ ժողովուրդս են, որդիներս են, ամօթով պիտի չձգեն զիս». եւ զանոնք փրկեց իրենց բոլոր նեղութիւններէն: Ո՛չ թէ պատգամաւոր մը կամ հրեշտակ մը, այլ Տէրը ի՛նք փրկեց զանոնք: Որովհետեւ կը սիրէր զանոնք եւ կը խնայէր անոնց, ինք անձամբ փրկեց. ոտքի կանգնեց եւ բարձրացուց զանոնք անցեալ բոլոր ժամանակներուն մէջ:

Բայց անոնք անհնազանդ գտնուեցան եւ իր սուրբ Հոգին տրտմեցուցին. ուստի Տէրը թշնամացաւ եւ ինք պատերազմեցաւ անոնց դէմ:

Այն ատեն անոնք հին օրերը փնտռեցին, ըսելով. «Ո՛ւր է Մովսէսը, Տիրոջ ծառան. ո՛ւր է Տէրը որ ծովէն հանեց իր հօտին հովիւը. ո՛ւր է ան որ իր սուրբ Հոգին դրաւ իր ժողովուրդին մէջ. ան՝ որ իր աջով առաջնորդեց Մովսէսը եւ իր անունը յաւերժացնելու համար իր փառաւոր զօրութեամբ անոր առջեւ բացաւ ծովուն ջրերը»:

Ապա իր ժողովուրդը բացուած անդունդէն անցուց այնպէս դիւրին՝ ինչպէս ձի մը կը քալէ չոր գետին վրայէն կամ ինչպէս նախիրը կ'անցնի դաշտին մէջէն: Տիրոջ Հոգին իջած՝ կ'առաջնորդէր զանոնք: Այո՛, այդպէս առաջնորդեցիր քու ժողովուրդդ, քու անունդ փառաւորելու համար:

Արդ, նայէ՛ երկինքէն, քու սուրբ եւ փառաւոր բնակութենէդ, եւ տե՛ս. ինչո՞ւ ա՛յլ չես հետաքրքրուիր մեզմով եւ զօրութիւնդ ցոյց չես տար. ո՞ւր մնաց քու զթառատ ողորմութիւնդ, որով կը ներէիր մեզի:

Չէ՞ որ մեր հայրն ես դուն: Նոյնիսկ եթէ Աբրահամ չի գիտեր մեզ եւ Յակոբ չի ճանչնար մեզ, բայց դուն մեր Հայրն ես, ո՛վ Տէր, փրկէ՛ մեզ, որովհետեւ մենք սկիզբէն ի վեր քեզի կը պատկանինք:

Ինչո՞ւ կը ձգես որ խոտորինք քու ճամբաներէդ, ո՛վ Տէր, ինչո՞ւ թոյլ կու տաս որ խուլ ըլլանք քու կանչիդ եւ քու երկիւղդ չունենանք: Վերադարձի՛ր, Տէ՛ր, քու ծառաներուդ սիրոյն. վերադարձի՛ր այն ժողովուրդին սիրոյն որ քու ծառանգութիւնդ պիտի ըլլայ:

Զըլլայ որ ընդմիշտ կորսնցնենք Սիոնը, քու սուրբ լեռդ. որովհետեւ ահա մեր թշնամիները առժամաբար տիրեցին մեզի, ոտնակոխ ըրին քու սրբարանդ, ու մենք եղանք առաջուան նման, երբ տակաւին մեր Տէրը չէիր դուն, երբ դեռ քու անունդ չէինք կրեր:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՄՈԹԷՆՈՍԻ ԳՐԱՄ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (3.1-12)

Սա՛ եւս գիտցիր, թէ վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի դառնան անձնասէր, դրամապաշտ, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներուն անհնազանդ, ապերախտ, սրբութիւնները ոտնակոխող, տմարդի, անգուլթ, չարախօս, անհանդուրժող, դաժան, բարիին թշնամի, մատնիչ, անպատկառ, գոռոզ, եւ աւելի հեշտանքը սիրող՝ քան զԱստուած: Երեւութապէս աստուածապաշտ են անոնք, բայց խորքին մէջ չեն հաւատար աստուածապաշտութեան զօրութեան: Զգուշացի՛ր անոնցմէ: Անոնց մէջ կան նաեւ այնպիսիներ, որոնք տունէ տուն կը մտնեն եւ իրենցմով կը հրապուրեն մեղքերով ծանրաբեռնուած եւ զանազան ցանկութիւններէ բռնուած թե-

Թեև արտաքին կրթությունը, որոնք միշտ կ'ուզեն գիտնալ, բայց երբեք ճշմարիտ գիտութեան չեն հասնիր: Այնպէս ինչպէս Եանէս եւ Եամբրէս մոգերը Մովսէսի հակառակեցան, միտքով ապականած եւ հաւատքով սնանկ այս մարդիկն ալ ճշմարտութեան կը հակառակին: Բայց իրենց յաջողութիւնը երկար չի տեւեր, որովհետեւ իրենց անմտութիւնը շուտով յայտնի պիտի ըլլայ բոլորին, ճիշդ ինչպէս այն երկուքինը եղաւ:

Բայց դուն կառչած մնա իմ ուսուցումիս, կեանքի օրինակիս, յօժարութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, որոնք ցուցաբերեցի՝ նոյնիսկ հալածանքներու եւ չարչարանքներու մէջ: Գիտես թէ ի՞նչ պատահեցաւ ինծի Անտիոքի, Իկոնիոնի եւ Լիստրայի մէջ. թէ ի՞նչ պիտի հալածանքներ կրեցի, եւ այդ բոլորէն Տէրը զիս ազատեց: Նոյնպէս, բոլոր անոնք որոնք կ'ուզեն աստուածապաշտութեամբ Քրիստոս Յիսուսի միացած ապրիլ, անպայման հալածանքներու պիտի ենթարկուին:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (6.22-38)

Յաջորդ օր, ժողովուրդը՝ որ մնացած էր լիճին միւս կողմը, տեսաւ թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձին գացին. իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին, որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնաում եկան Յիսուսը փնտռելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին. «Վարդապետ, ե՞րբ եկար հոս»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտռէք՝ ո՛չ թէ որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէք ապահովել այն կերակուրը որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին. «Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք»: Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք անոր՝ որ ինք զրկեց»: Անոնք ըսին.

«Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք. ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. «Անոնց երկինքէն հաց տուաւ ուտելու համար»: Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ՝ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ տուած հացը ան է՝ որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»: Անոնք ըսին. «Տէ՛ր, մի՛շտ տուր մեզի այդ հացը»:

Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը: Ան որ ինծի կու գայ՝ ընաւ պիտի չանօթենայ եւ ան որ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսաք ալ զիս, եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք որ Հայրը ինծի կու տայ՝ ինծի պիտի գան, եւ ես ինծի եկողը պիտի չմերժեմ. որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը անոր՝ որ զիս զրկեց»:

ԱՅԵԼԵՅԷՐԵ
ԵԿԵՂԵՑԻՅԱ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁԸ
ԵՒ
ՁԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՄԸ յԱՅՏԵՅԷՐԸ
(like).

www.facebook.com/SourpHagopChurchMontreal

ԱՅԵԼԵՅԷՐԵ Ա
ԵՒ
Ս. ՅԱՎՈՒ ԱՌԱՋԱՌՈՂԱՆՈՍ
ՄԱՐ ԵԿԵՂԵՑԻՅԱ ԿԱՅԷՁԸ՝
www.sourphagop.net

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՌՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՄԸ
ԱՆՏՈՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷ ԿԱՊՈՒԷԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՅԱ ԳՐԱՍԵՆԵԱԿ:

Անդրադարձներ Եւ Խորհրդածություններ

Ձեկուցում Թիւ 6.- Ս. Պատարագի մասին դասախօսություններու շարքին նախորդ գեկուցումները կարելի է գտնել Կիրակնօրեայ Թերթիկի 22 Դեկտեմբեր 2024-ի, 12 Յունուար 2025-ի, 19 Յունուար 2025-ի, 26 Յունուար 2025-ի, 9 Փետրուար 2025-ի համարներուն մէջ:

Անցեալ անգամ սկսայ գեկուցել Հայ եկեղեցւոյ Պատարագամատոյցը կանխող հանգրուանին վրայ: Այստեղ կը շարունակեմ, եւ կ'անցնիմ՝ երկրորդ հանգրուանի սկզբնական փուլին:

Պատարագի նկարագրութիւն ունինք 150 թուականէն: Հեղինակն է Յուստինոս Վկայ: Ան գրած է, թէ Հռոմի մէջ ինչպէս կ'ընէին Պատարագը: Անկէ երկու նկարագրութիւն ունինք:

Առաջին նկարագրութիւնը կապուած է Մկրտութեան Խորհուրդին: Այս՝ նկարագրութիւն մը Կիրակնօրեայ Պատարագի: Ըստ առաջին նկարագրութեան, հասարակաց աղօթքներէ ետք, պաշտամունքին մասնակիցները զիրար կ'ողջունեն համբոյրով: Ատր կը հետեւի հացի եւ ջուրի ու զինիի բաժակին (*) բերուիլը ժողովեալ «եղբայրներ»էն գլխաւորին: Եւ գլխաւորը զանոնք առնելով՝ յանուն Որդիին եւ Ս. Հոգիին կը զովարանէ Հայրն Աստուած, Անոր փառաբանութիւն կ'առաքէ, եւ բոլորին կողմէ գոհաբանութիւն կը մատուցանէ Անոր: Երբ ան աղօթքներն ու գոհաբանութիւնը կը կատարէ՝ ժողովուրդը «Ամեն» կ'ըսէ: Յետոյ սարկաւազները ժողովուրդին հացէն, զինիէն եւ ջուրէն կու տան: Վերջն ալ՝ բացականերուն կը տանին:

Երկրորդ նկարագրութիւնը: Կիրակի օր երբ կը ժողովուին՝ կը կարդան առաքեալներուն «յիշատակարաններ»ը, այսինքն՝ աւետարանները եւ նամակները, նաեւ՝ մարգարէութիւնները: Երբ կ'աւարտեն ընթերցումները՝ գլխաւորը իրատ կու տայ եւ կը թելադրէ «նմանող եւ նախանձաւոր լինել ամենայն լաւութեանցն այնոցիկ»: Յետոյ ամէնքը ոտքի կը կենան եւ աղօթքներ կ'առաքեն երկինք: Աղօթքներուն կը յաջորդէ հացի, զինիի եւ ջուրի բերուիլը: Գլխաւորը աղօթքներ եւ գոհաբանութիւններ կը մատուցէ: Աղօթքներուն եւ գոհաբանութիւններուն աւարտին՝ ժողովուրդը «Ամեն» կ'ըսէ: Բոլորին կը բաշխուի հացէն, զինիէն եւ ջուրէն: Յետ պաշտամունքին, սարկաւազները հացէն, զինիէն եւ ջուրէն կը տանին բացականերուն: Անոնք որ ընչաւետ են, եթէ կը կամենան, ըստ իրենց յօժարութեան նուիրատուութիւն կ'ընեն, ու ինչ որ կը հաւաքուի՝ գլխաւորին մօտ կը պահուի, որպէսզի ծառայէ որբերու, այրիներու, տառապողներու, ջքաւորներու, կալանաւորներու, օտարներու, «ամ հասարակ ամենեցուն իսկ որոց պէտք ինչ են»:

2-րդէն 4-րդ դար, եկեղեցական տարբեր կեդրոններու մէջ կը մշակուէին տարբեր բովանդակութեամբ Պատարագներ: Մինչ նախապէս այլազան աղօթքները ինքնաբոլի կ'ըլլային, մշակեալ Պատարագներուն հետ՝ անոնք կը դադրէին ինքնաբոլի ըլլալ: Այս փոփոխութիւնը՝ առաջքը առնելու համար օտարոտի եւ ապաշնորհ գեղումներու: Բոլոր Պատարագներուն ալ կեդրոնը կ'ըլլար հացի եւ զինիի արարողութիւնը: Ամէն տեղ չէ, որ ջրախառն զինի կը մատուցուէր:

Նախորդ գեկուցման մէջ ըսի, թէ մեր առաջին լուսաւորիչները իրենց հետ պիտի բերէին Երուսաղէմեան պարզ կարգը: Այս մէկն է, որ հաւանաբար Ատրի եկեղեցւոյ մէջ մշակուելով եւ Յակոբոս առաքեալի վերագրուելով՝ ի գործածութեան պիտի ըլլար: Եւ Հայաստանէ ներս տոյն եկեղեցւոյ առաքելութեան աշխոյժ

շրջանին՝ հայ եկեղեցիներ պիտի իւրացնէին առաքեալին վերագրուածը:

Փառէն եպս. Մելքոնեան գրած է. «հայերը մանաւանդ երբ գուրկ էին ազգային գիր-գրականութենէ՝ քրիստոնէական առաջին դարերուն, ինչպէս մշակոյթի ուրիշ մարգերուն մէջ՝ պատարագամատոյցի ճիւղին մէջ եւս հեղինակութիւն չէին կրնար ներկայացնել: Եւ ստիպուած էին դրացի յոյներէն եւ ասորիներէն օգոտիլ կամ փոխ առնել»: Եւ Գրիգոր Լուսաւորչի առնչաբար՝ «Հաւանականաբար, Ս. Գր. Լուսաւորիչ, իբրեւ Կապադովկեան կեսարիոյ մէջ ապրած եւ դաստիարակուած եկեղեցական, իր հետը բերած եւ կիրարկած ըլլայ յունական պատարագամատոյցը, որ ժամանակ մը ընդհանրացած է Հայաստանի եւ Փոքր Հայքի մէջ: Իսկ հարաւային եւ արեւելեան Հայաստանի մէջ՝ թերեւս ասորական պատարագամատոյցը կիրարկուած ըլլայ»:

5-րդ դարուն, Հայաստանի մէջ կը կիրարկուէին Յակոբոս առաքեալի, Բարսեղ Կեսարացիի, Գրիգոր Նագիանգացիի եւ Յովհան Ոսկեբերանի Պատարագամատոյցները:

Չարեհ արք. Ազնաւորեան գրած է, թէ 5-րդ դարուն, Յովհան Մանդակունի «ոչ միայն համադրեց Բ. Կեսարացիի, Գր. Նագիանգացիի եւ Յ. Ոսկեբերանի Պատարագները, այլ նաեւ՝ որոշ պատշաճեցումներ ու լրացումներ կատարեց, որոնք եկան Պատարագի բնագրին հայկական դրոշմ մը տալու»: Այս նաեւ ակնարկուած, թէ Յ. Մանդակունիի ձեռքով խմբագրուած Պատարագամատոյցը իր հիմնական ձեւով պահուեցաւ յաջորդ դարերուն»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

(*) Հայ եկեղեցւոյ աւանդութիւնն է անապակ զինիի գործածութիւնը: Սկիզբէն: Թէեւ ժամանակներ եղած են, երբ ոմանք բիւզանդական եւ հռոմէական ազդեցութեան տակ՝ ջրախառն զինի գործածած են: Ներսէս Լամբրոնացի գրած է. «Ո՛վ սոսկալի եւ սարսափելի երկիւղս ի վերայ վարդապետաց, որք սովորեցան խառնել զջուրն ընդ զինին»: Անապակ զինիի աւանդութիւնը եւս պատճառ եղած է, որ Հայ եկեղեցւոյ առաջնորդներուն գլուխները ցաւցնեն: Չրախառն զինիի աստուածաբանութիւնը հիմնուած է Յովհաննէսի աւետարանին 19.33-35-ի վրայ, ուր նկարագրուած է, թէ խաչեալ Յիսուսի կողէն արիւն եւ ջուր հոսեցաւ: Ինչո՞ւ մեր հայրերը անապակ զինի գործածած էին, եւ աւանդած՝ գործածել: Ակնարկուած էի, թէ զատկական ընթերցիքի ծիսական կարգը չորս բաժակներ ուներ: Առաջին երեք բաժակները՝ ջրախառն էին, իսկ վերջինը՝ անապակ: Նախորդ գեկուցումիս մէջ, գրած էի, թէ չորս բաժակներէն վերջինն է, որ Յիսուսի յիշատակին կատարման համար պահպանուեցաւ: Վերջին բաժակին ատեն կ'երգուէր Սղ 136-ը, ուր կ'ըսուի. «Գոհութիւն յայտնեցէք Անոր՝ որ Տէրն է տէրերուն. Անոր սէրը յաւերժական է (...): Եգիպտոսի անդրանիկ ծնունդները կոտորեց. Անոր սէրը յաւերժական է: Եւ իր ժողովուրդը անոնց մէջէն ազատագրեց. Անոր սէրը յաւերժական է» (Սղ 136.3, 10-11): Այս բաժակը, ուրեմն, Եգիպտոսէ Աստուծոյ սիրոյն շնորհիւ յաւերժական ազատագրութիւնը կը խորհրդանշէր: Ծեսին բաժակներուն բաժակն է:

ԳՔ
(Շարունակելի 6)



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹՔԱՆԵՐ ԾԵՆՍԱԻՆ

ՀԵՊԻՆԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԲՆ
ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՍՐԿ. ՆՈՒՍՈՒՏԵԱՆԻ

ԱՄԵՆԷՆ ԱՀԱԲՈՐԸ

Քաղցր Տէր, այս կէսօրէ ետք, վանականներէն մէկուն հետ բաժնեցի յանցանքի եւ մեղաւորութեանս զգացումները: Լաւ խորհուրդ տուաւ: Շարունակեց յորդորել, որ հեռու մնամ ներզննող վերլուծումէ եւ անձովս մտազբաղուելէ, եւ կեդրոնանամ քեզի սերս յայտնելու վրայ:

Ինձի ամենէն օգտակարը նկատողութիւնն էր, թէ արդէն իսկ պատահածէն աւելի գէշ բան չի կրնար պատահիլ. մահդ, ով Տէր, ամենէն սահաւոր, մեղաւոր, եւ սոսկալի պատահարն է ամբողջ պատմութեան: Մենք մարդ էակներս քեզ սպաննեցինք, մեր եղբայրը՝ Որդին Ամենաբարձրեալին: Ինչ որ ալ պատահի - սով, կեղեքում, կամ պատերազմ - չի կրնար արդէն իսկ պատահածէն աւելի չար ըլլալ: Բայց դուն յոռեգոյնն իսկ նուանեցիր: Մեզ չմերժեցիր, բայց մահդ մեր փրկութեան նշանը դարձուցիր: Մերդ ամբողջութեամբ տեսանելի դարձաւ մեզի՝ քու մահուանդ մէջ ու միջոցաւ: Ինչ որ ալ չարիք գործեցի կամ պիտի գործեմ, դուն արդէն զայն կրելով տառապեցար, եւ ինձի ցոյց տուիր, թէ ատիկա քեզի չդառնալու աստիճան չարութիւն չէ:

Ով քաղցր Տէր, տուր որ ներողութեանդ վրայ երբեք չկասկածիմ, այլ միշտ յիշեմ, որ մեղքերուս համար մեռար ու մեռելներէն յարութիւն առիր, որպէս նշան ներող սիրոյդ: Թող որ ոչ թէ յանցանքի զգացումս, այլ սերդ զիս առաջնորդէ: Ամեն:

(Շար. 33)



ՎԱՐԳԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Նախագահութեամբ՝
Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին
Յաւարտ Ժամերգութեան
Պատգամ Առաջնորդ Արքեպիսկոպոս Հօր
Հիմնարկի, 27 Փետրուար 2025
Նրեկոյեան ժամը 7:00